Այդ նույն սկզբունքով են կառուցված նաև հայ դասական գրականության հետաքրքիր գործերից մեկի Վ. Միրաքյանի «Լավարի որսը» պլումի նկարագրումները։ Սիրո թեման մոտաց է գործել Խանջյանի արվեստը ու դարձել առաջնահերթ ստեղծագործական մղյումներից մեկը Վ. Միրաքյանի «Լավարի որսում» (1952), որն ունի սոցիալական շեշտվածություն, անգամ այստեղ, նկարչը հիմնականում գրավում է Ավարդի ու Կարոյի սիրո ողբերգական հենքը։ Նկարիչը այստեղ ստեղծել է երիտասարդ գեղջունու բավականին սիրունատես, քայլ միաժամանակ «միօրինակության» կնիքը կրող կերպար, որը հետաքրքիր է իր արտաքինով, կոլորիտային է, սակայն որոշ շափով զորկ ներդրեն անհատավանությունից։ Դա բնորոշ է նաև «Անուշ» նկարագրումների, ինչպես նաև «Երջանիկ ճանապարհ» և «Անահիտ» կտավների հերոսներին։ «Լավարի որս» նկարագրումներում, չնայած կերպարների որոշակի հիեսականացմանը, որոշ տեսարանների որմանտեկ մեկնարանումներին, առանձին թերթերի, վերջնազարդերի ու սկզբնազարդերի կառուցումները լակոնիկ են, գուապ։ Նկարչը հաջողվում է ընթերցողին հասցնել իր մոլորումները, որոնց համարնշյում են գրողի զգացումներին։

Նկարագրումն նույնադիա սկզբունքով է կառուցված նաև Հովհ. Թումանյանի «Գիրուր» մնթերցողներին հուզել է իր փորձի հերոսի գեղջական միամտությամբ, մեծ քաղաքի երևուց-

քարին շարունակ Հովհ. Թումանյանի «Գիրուր» մնթերցողներին հուզել է իր փորձի հերոսի գեղջական պատմվածի ծառակությամբ։

ների հանդեպ նրա ունեցած անմիջական վերաբերմունքով, իր ողբերգական վախճանով։ Գ. Խանջյանը կարողացավ գտնել այսպիսի գծերով օժուված Գիքորի գեղարվեստական կերպարը, կարողացավ ցուց տալ այն միջավայրը, որտեղից նա գնաց (գյուղական քննության ազատությունը) և որտեղ սկսեց նանաչել աշխարհը (քավագ Արտօնի տունը, ինչ Թիֆլիսի փողոցները)՝ իր կուրտիտային առանձնահատկությամբ։ Պատմվածքի հերոսը նկարագրում է հմայիշ է իր գեղքական անմիջականությամբ, իր անօգնական մենակությամբ։ Նկարիցը խորն ըմբռնելով մանուկ ընթերցողի հոգերանությունը, խոսափում է Գիքորի ողբերգական կյանքի սենտիմենտալ վերառտադրությաց։ Միաժամանակ, համոզիչ կերպարները, դեպքերի ու երկու պատկերման հիմքում ողբերգական մանականությունը հաստակ մատուցում է, նկարագրում առանձին հնարայիտ դրվագները (օրինակ՝ նախատիտողասթերթը՝ Համբոյի նամակի տեքստով ու տատասկի ցոյտերով) գալիս են հաստատելու, որ Խանջյանը նաև մանկական գորի վարպետ նկարագրող է։

Գեղանկարչական հնարների օգտագործումը թույլ է տալիս նկարչին գործողություններն առավել տպավորիչ դարձնել։ Սավայն նրա այս տիպի նկարագրությունում ավովում շատ ավելին, քան անհրաժեշտ։ Կորչառը է գրի գրաֆիկայի ասլունդը։ Հիմնական թերթերը, իրենց հնեցնատիպ արտահայտչականությամբ հանդերձ, շեն շաղկապվում գրաֆիկական հստակությամբ ստեղծված տիտոսաթերթի, սկզբնազարդերի ու վերջնազարդերի հեն։ Երկու տեխնիկաների առկայությունը «Գիքորի» նկարագրությունում առիթ է տալիս մտածելու, որ Գ. Խանջյանը ծգուում է գեղանկարչությունը սահմանազատել գրաֆիկայից։ Եվ դա տեղի ունեցավ Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սացոն» պոեմը նկարագրելիս (1957)։

Պատմի բանաստեղծական հարուստ կերպարները

նկարչին հիմք են տալիս միայն ու միայն հոգերանական էջեր ստեղծելու, քանի որ գործողությունների զարգացման հենց չկա: Այստեղ չկան «Անուշի» կամ «Գիքորի» նման սյումետրային գործողությունների վյա կառուցված հոգերանական տեսարաններ: Այստեղ ամեն ինչ շաղկապված է պումի հերոսի հոգեվիճակի հետ: Եվ նկարչին հաջողվել է գտնել նկարագրուման հաջորդականությունը պայմանավորող հոգերանական գիծ:

Եթե պումի նկարագրուման առաջին թերթում Սացոյը դիմանկարչական լուծում է՝ ուժու, հումկու, մի փոքր հերոսական կեցվածքով, ապա վերջին էջում նկարիչը պատկերում է խնչագրված Սարոյին գլուխը ծեղքերով բռնած, փախչելիս։ Փոխադարձ կապ կա այս երկու թերթերում. բնության մեջ մեծացած հզոր, հոգեցես մազուր և ուժու անձնակուրություն և խնձորացած, փոցրացած, իր եսը կորցրած մի եւկ: Մենցոյի կերպարն ինչ-որ տեղ հիշեցնում է Սարոյին։ Սակայն Սացոյին պատկերող թերթն ավելի արտահայտիչ է զծանկարով, հստակ՝ կառուցվածքով, բարդ՝ ներքնաշանարհով։ Հատկապես կատարողական մեծ վարպետությաց է հասցված շարքերի տեսարանը, որտեղ գեղջուկ երիտասարդը զարմանքից ու վախից սարսափած հայացքով կուչ է եկել օտայի մի անկյունում։ Նրա իրական, որամասիկ կերպարին հակադրված են երևակայական կանաց ուրվականային, գեղեցիկ ու տգեղ, բայց խորհրդավոր դեմքերը։ Նկարիչը կարողանում է գտնել իրականի ու երևակայականի հարաբերությունը, գտնել այն միասնական ոճը, որը պատկերածին տալիս է ավարտվածություն և համոզականություն։ Նկարագրույթները ամրողական են, կուտ կառուցված ունեն, որին նկարիչը հասնում է լուսի ու ստվերի ուժու համարդությունների, տուային փափուկ անցումների շնորհիվ, որոնք միաժամանակ գծանկարին հաղորդում են փափկություն և պլատիկական արտահայտչականություն:

«Լոռեցի Սաքոյի» Ըկարազարդումները կատարված են գուաշով և սոտով, որոնց հնարավորություն են տախու ստեղծելու սկի ու սպիտակի հնցնօրինակ համադրություններ: Այստեղ արդեն չկա նախորդ աշխատանքների գումային բազմազանությունը: Սա գրափակական մտածողությամբ ստեղծված աշխատանք է: Օգովկելով սկ գուաշի և թափանցիկ սոտով հնարներից, Խանջյանը կարողանում է ձևերի հստակության միջոցով հասնել ամրողի ընդհանրացմանը, շեշտել կարևոր ու էականը, կատարողական յափնիկ միջոցներով հասնել հոգեբանական արտահայտչականության: Այդ առումով հատկապես Եշանակալից է վերջին թերթը՝ Երևակայական շարքերից վախեցած Սաքոյն փախչում է գուվն ափերի մեջ առած, փախչում է խելակրույս, փախչում է երկուտակ դրամած: Այս թերթը իր դրամատիկական խորությամբ մեծ աղերս ունի Ա. Պուչկինի «Պենձե հնձյալը» պոեմի համար արված՝ Ա. Բենուայի Ըկարազարդումների գրեթե նույնատիպ թերթի հետ, որտեղ Պենձե հնձյալն իր ողջ վերությամբ ընթառում է դեպի պոեմի հերոսը՝ Եվգենին:

Խանջյանը կարողանում է բացառիկ վարպետությամբ կառուցել ողջ Ըկարազարդումների և, հատկապես, այս թերթի կոմպոզիցիոն արտահայտչականությունը: Սաքոյն փախչում է դեպի թերթի խորքը, փախչում է փոքրացած, արխալույի ծածանվող փեշերից առավել թափ ստացած: Նրա ոստերը կորոված են գետնից: Կերպարի այրօինակ դինամիզմն օգնում է հերոսի հոգեվիճակի առավել դժուսորմանը:

Տարիների ըրտնացան աշխատանքը, բազմակողմանի որոնումները Ըկարչին թերթ էին վարպետություն, մտածելակերպի կերպարային հստակություն և փիլիստիքայական խորություն: Դրանով պետք է բացատրել «Լոռեցի Սաքոյի» Ըկարազարդումների բացառիկ հաջողությունը՝ հնչանական ու միութենական ու միջազգային գեղարդումը:


Վեստական ցուցահանդեսներում: Գ. Խանջյանը կարողացել էր ստեղծել մարդկային որոշակի հոգեվիճակներ, որոնք դրված էին ազգային մտածողության սահմաններում: Այդ Ըկարազարդումները բեկման Եշանակություն ունեցող երևոյթ էին Գրիգոր Խանջյանի արվեստում: Նկարիչը գտնել էր գրքի ձևավորման իր մտածողությունը, որը շաղկապիւմ էր հըտակ, արտահայտիչ գծանկարին, ձևի բարձր գցացողականությանը: Ու կոմպոզիցիա կառուցելու՝ խանջյանական կարողությանը:

Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սաքոյ» պոեմը Ըկարազարդվում էր առաջին անգամ: Սա ևս մի առաջնահատկություն է, որը բնորոշ է Խանջյան գրաֆիկին: Նա ձևում է Ըկարազարդի այնախիս գրական երկեր, որոնց առաջին անգամ պետք է ստանան գրաֆիկական կերպավորում: «Լոռեցի Սաքոյ» պոեմի Ըկարազարդումներով Գ. Խանջյանը կարողացավ գրքի ձևավորման բնագավառում հասնել մտածելակերպի հստակության, մեկնարանումների հմատավորված խորության: Սա էր այն հիմքը, որը հնարավորություն տվեց Ըկարչին մենարկելու այնախիս մի բարդ ու պատաժանատու գրքի Ըկարազարդում, ինչպիսին Խաչատրու Մբովյանի «Վերջ Հայաստանի» վեպն (1958):

Խ. Մբովյանի վեպը, որպես գրական երկ, ունի ինցնատիպ կառուցվածք: Գործողությունները ծավակում են 19-րդ դարի առաջին կեսի պատմական կարևորագույն հետքերի ֆոնի վրա: Մրանց և՛ բարդություններ են ստեղծում ձևավորող Ըկարչի համար, և ազան ստեղծագործելու հնարավորություններ տալիս: Թերևա սրանով պետք է բացատրել վեպի հարյուրամյա գոլության ընթացքում Ըկարիչների «անտարերրությունը» նրա նկատմամբ: Նկարչական կերպարներով վերարտադրել վեպի որևէ կովմինացիոն հանգույց, Եշանակում է ստեղծել պատմական թմբայով բարդ պատկեր:

«Վերջ Հայաստանի» վեպը Ըկարազարդելիս Ըկարշին տրված էր հայ ժողովրդի պատմությունց





Առաջին թերթերից մեկում, որտեղ պատկերված է վեպի հանգուցային իրադարձություններից մի տեսարան, այն է՝ պարսիկ ֆառաշների կողմից թագուհու առևանցումը, ըստ գրական երկի անհրաժեշտ է նաև հերուսուհու մոր առկայությունը: Խանջյանի համար Թագուհու մայրն այս տեսարանում անհրաժեշտ է որպես դրամատիկական մի կերպար, որը կուրմ է դեպքերի որթերգության ողջ հմաստափորումը: Կոմազոյիշիան կառուցված է ֆառաշների սարսահար կերպարների անհանգիստ շարժման, Աղասու ծառս եղած միու և դեպի անկյունը զնացող, սուրբ թափով բարձրացրած Աղասու ազ ծերի շարժման վլա: Նկարի աջ անկյունում, կաթնագույն շենքը ֆոնի վրա, ուժեղ սև հատվածով դեպի երկինք են բարձրացել մի գույգ չղրացած ձեռքեր: Կեր են բարձրացել որպես աղերսող, գթօւթյուն խմբող, որպես բողոքող, որպես Աղասու սիրագործություն օրինող: Ազգային տարարզու ծնկաչոր պատկերված, մեծ արտարայտչականությամբ օժուված տարեց կնոջ կերպարը դարձել է տեսարանի կոմպոզիցիոն կենտրոնը, նրա շարժումը կրող ակտիվ հատվածը: Այդ նույն կերպարին հանդիպում ենք մյուս մասսայական տեսարաններում: Սև, մեծ զանգվածով նա խոնարիչական է Երևանի գաղյթի տեսարանում այնքան հոյակապ նկարագրված և: Արովյանի վեպում և նույնացած որթերավական-արտահայտիչ՝ Խանջյանի նկարում: Դեպի աջ գմացող հոծ բազմության միխրագույն ֆոնի վրա լուսավոր թերուվ են լուծված թշնամու սրից ընկած երիտասարդ հայութին և սարսահարա աշերով մանուկը: Ծարժվող բազմության և այր երկու ֆիգուրների տոնային հարաբերություններն ու նրանց տեղը թերթի ընդհանուր կոմպոզիցիայի մեջ այնքան են հմաստավորված, որ թվում է, թե բոլոր միասին շարժվում են դեպի աջ անկյունում տարեց կինը և՝ հայութերից հետոց տեղում առցուցվում է առաջին հայութիչը:

պլանում խոշոր պատկերված, ներքին մոնումենտալ գույքամբ օժուված, որպես մեծ վշտի մարդուացում: Տարեց կնոջ գլխավերսում, թույլ շառագունած երկնակամարի ֆոնի վրա նկարիչը տեղափողում է թըշնամու թի ծայրը միայն, մի փոքրիկ դետալ, բայց որքան արտարայտիչ և որքան սերտորեց շաղկապված իրադարձությանը, այդ օրերի Հայուսաւամին վիճակված որթերգությանը: Նույն այդ կնոջը տեսնում ենք նկարագրությունների լավագույն թերթերից մեկում «Շահական գործերի մուտքը Երևան» տեսարանում, որտեղ ընթիւնությունը ցննություն ապրող բազմության մեջ կանգնած է ոտարքիկ փոքր ներխայի գլխավերսում և, որպես հովանավոր, ծեռքեց աղերսանցով վեր բարձրացրած օրինում է իր ժողովորի փրկությունը: Վերջապես այդ նույն ծեր կնոջը տեսնում ենք հիմնական մասսայական տեսարաններից մեկում Աղասու բարձման տեսարանում: Եթե նախորդ թերթերում տարեց կինը որդում էր կոտորածն ու ավեր հայրեմիքը, ապա այստեղ նա խոր արժանապատկերյամբ է ընդունում հայրեմիքի համար զրիված հերոսի մարզ: Եվ եթե այդ կերպարն առանձին էքային նկարներում այլքան միահրաված է կոմպոզիցիային և նպաստում է նրանց գեղարվեստական ամբողջությանը, ապա նույն այդ կերպարը գրեթ ֆորդացում, մեծակտոր բազալտ միխրագույն քարերից ստեղծված պատի ֆոնի վրա դառնում է միշնահայրան քանդակագործության զուապ և ոճավորված սկզբունքով արված բարձրաքանակ, նրա միխրագույն հնատիկ հնանությամբ հատունում է պատկերման կենսուրունական հատվածը: Ծեր կնոջ հագուստերի ցած իջնող խստ գծերը շաղկապվում են «քարերի» հատման գծերի հետ, որոնց վերևում նկարիչը «փորագրում է» վիճակի արձանագրությունը: «Բայց թերառում լիզու կա, փորում սիրտ, եւ լեզապատա ծեն կտա «էղ ո՞ւմ վրա էք թուր հանել, հայոց մեծ ազգին չէ՞ ճանաշում»: Եվ, վերջապես, նույն այդ կինը ծնկաչոր խոնարիչական է խաչքարի

առաջ, որը խորհրդանշում է կորստից փրկված ժողովոյի մշակույթը: Գրքի սուպեր շապիկը կատարված է այնքան ինքնատիպ և նպատակալազ, որ ցածում ան ու խիստ տառերով վերնագիրը՝ «Կերք Հայաստանի», ընթերցվում է նաև որպես առանձին նկարի խորագիր:

Խ. Արովյանի «Կերք Հայաստանի» վեսի նկարագրույթը հանդես թերեց Խանջյան գրաֆիկի գիրը ձևավորելու վարպետության նոր մակարդակը: Նա կարողացավ հասնել ձևավորման այնպիսի միասնության, որը բացակայում է ցորա նախորդ ստեղծագործություններում: Սովորաբար արվեստում Գ. Խանջյանը ստեղծեց նկարագրույթման իր ոճը, գրաֆիկայի վարպետության այն մակարդակը, ուր գեղանկարչի մտածելակերպ զուգակցվել է գծանկարի հմտությունը:

Այս նկարագրույթմերից հետո պատահական չէր Պարույր Սևակի «Անլուելի զանգակատուն» պոեմին անդրադառնալը (1963—1965):

«Տարբեր ժամանակներում բազմիցս կերպավորել եմ զանգազան դրվագներ Կոմիտասի կյանքից, միշտ էլ զգայով ցանկություն նորից ու նորից վերադառնալ նրան:

Պարույր Սևակի պոեմը մարմնավորման մի նոր առիջ հանդիսացավ, և նորա հետ մեկտեղ հրամցնում եմ ծեղ իմ Կոմիտասը՝ իր հոգինաց կյանքի բոլոր ոլորտներում, ինչպես՝

— Մշտահուն ու մշտարթուն  
Անլուելի զանգակատուն:

Այսպես է գրել Գրիգոր Խանջյանը Պարույր Սևակի «Անլուելի զանգակատուն» պոեմի համար կատա-

րած իր նկարագրադրույթների ցուցահանդեսի կատալոգի առաջաբանում:

«Եմ Կոմիտասը»: Եթե Պարույր Սևակի պոեմը գրավեց բազմահազար ընթերցողներին կոմիտասյան գրական կերպարի աննախընթաց տաղանդավոր մարմնավորմամբ, ապա Խանջյանական նկարագրույթներից պարզ է դատնում, որ նա իր արժանի գեղարվեստական մարմնավորումն է ստանում նաև սովորաբար կերպարվեստում: Ընդ որում, նկարիչն իր մտահացման իրավորժման համար հիմք է ընդունում Պ. Սևակի պոեմը և Կոմիտասի կյանքը ու գործը՝ ընդհանրապես:

Իր Կոմիտասին գտնելու առաջն փորձը հայ կերպարվեստում պատկանում է Ենիշեն Թաղևոսյանին (1870—1936): Մոսկվայի նկարչության, քանդակագործության ու ճարտարապեսության ուսումնարանի սան ե. Թաղևոսյանը 1893 թվականից գալսի է Էջմիածնի և իր ծննդավայրում դիմումային աշխատանք է անում: Միաժամանակ Թաղևոսյանը նկարում է շրջապատող բնությունը ու մարդկանց: Գեղանկարչական մի կոտայի մասին նա գրում է իր ուսուցին: Վ. Դոյենովիս:

«Այստեղ ես նկարել եմ մի եւյոտ՝ «Էջմիածնի լճակը»: Առաջին պահն ստվերի մեջ է՝ ափին նըստած սարկավագով, որն իբրև ուրվանկար գծագրվում է տատանվող ցիր թափանցիկ ֆոնի վրա: Խնդիրը շատ հետաքրքրական է, չգիտեմ, Ձեզ դուք կգա թե ոչ»: Խոսքն այն նկարի մասին է, որը հետագայում լայն տարածում ստացավ «Կոմիտասը Էջմիածնի լճափին» խորագրու: Խնչպես երևում է վերոհիշյալ նամակից, ե. Թաղևոսյանին հիմնականում հետաքրքրություն էին գեղանկարչական խնդիրներ: Ինչ իմանաց գեղանկարիչը, որ իր այս փոքր եւյոտը հայ կերպարվեստի պատմության մեջ մոտաց կզրիծի որպես Կոմիտասին պատկերող առաջին գեղանկարչական ստեղծագործությունը:

Թաղևոսյանի աշխատանքում նկարի վերնագիրն

<sup>1</sup> Խ. Արովյանի «Կերք Հայաստանի» վեպը Գ. Խանջյանի նկարագրույթում վերարտարակվեց Լատվիայում (1960), իսկ հայերեն հրատարակությունն արձանագրվել ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի արժաքած մերայի (1958): Այն հշկեց նաև որպես տարվա 50 լավագույթ գրքերից մեկը (1959).

է միայն կոմիտասական: Աևազգեստ վաճականը նկարչին ամրածեցու է որպես սև գումարիծ էտյուխի ընդհանուր կամաշա-արծաթագույն կոլորիտի հարստության համար: Հետաքայում, կոմպոզիտորի և նկարչի՝ Բյուրականում տեղի ունեցած հանդիպումից ստեղծվում է բոլորովին այլ գումային ոլորտներում լուծված մի էտյուխ (1903), ապա և թեմատիկ պատկեր (1935), որոնք նույնպես գեղանկարչական բարոր հարցադրումներ բացահայտող կոտավեր են:

Կոմիտասի և նկարիչ Փ. Թերլեմեզյանի ջերմ բարեկամության արդյունքն է 1912 թվականին Կոմիտասի ծննդավայր Կոտավեյում ստեղծված կոտավը:

Ուշագրավ է մի համգամանց: Ե՞կ թադևոսյանը, և՛ Թերլեմեզյանը Կոմիտասին պատկերում են բնության մեջ ստեղծագործելու, իր մտքերի, իր մտորումների մեջ: Այսպիսին է կոմիտասյան կերպարի երկու դասականների մեջնարանումը: Մեկը գեղանկարչական որոնումների իր ոլորտներում (Ե. Թադևոսյան), իսկ մյուած՝ այն ավանդների շրջանակներում, որին նկարիչը հաղորդակից էր եղել իր ակադեմիական ուսումնառության ժամանակ (Փ. Թերլեմեզյան):

4. Խանջյանը ստեղծեց ինը թերթ, ինը երգ Կոմիտասի մասին, ինը դրվագ նոր «հոգեմաշ կյանքի բոլոր ոլորտներից», որոնք ներշնչված էին ոչ միայն Պարույր Աևակի տաղանդավոր տողերի պատկերներով, այլև իմաստավիրված՝ Կոմիտասի ստեղծագործությամբ: Խանջյանը որպես նախատիպ ուներ Ե. Թադևոսյանի ու Փ. Թերլեմեզյանի աշխատանքները: Իր ստեղծագործական մղումներով նա շատ ավելի հակաված էր դեպի Ե. Թադևոսյանի արվեստը, որը պարզուց երևում է նրա նկարագրադրումներում:

Դ. Աևակի պետմի նկարագրադրումներում, Կոմիտասի կյանքին ու գործին նվիրված պատկերներ են: Բայց որպեսզի ցուց տրի նրա ողբերգական կյանքի ու պայծառ գործի միասնությունը,

Խանջյանն իր որոնումների ճանապարհին գտավ այդ միասնությունն արտահայտող բավականին ինքնատիպ ձև: Նկարագրադրումների ամեն մի էջը ուղղահայաց բարակ շերտով նա բաժանում է երկու հատվածի, որի շնորհիվ ստացվում են նոյն հարթության վրա գտնվող, օրգանապես իրար շաղկապված, սակայն առանձին երկու պատկերներ:

Գ. Խանջյանի նկարագրադրումներում Կոմիտասին ամենուր ուժեցվում է երգը: Սա նկարագրադրումների բացահայտման բանահիններից մեկն է:

Մանկան երգը... Առաջին երգը:

Եցմիածին: Վանքի վեհարանը: Ամենը ներծնձված է մոայլ խստությամբ: Կարողիկոսի, ինչպես նաև պատի տակ շարված սևասցեմ հոգևորականների կերպարները, նույնիկ միանման գորշ փայտար բազակառուները արդեն լարված ու մոայլ մի տրամադրության մեջնուրու են ստեղծուած: Իսկ էջի մյուս կորզման բաց լուսամուտն է, լուսամուտ է դեպի կյանքը, որտեղից հախուտն ներս է թափանցում լույսը, ուրախությունը, մարդկային շերմությունը: Մոայլ թագավորության մեջ դրանց նախակարապետն է փոքրիկ Կոմիտասը՝ միամիտ ու անմեղ մի երեխա և նրա բերած երգը:

Ազատ ու մասշտաբային լուծված կոմպոզիցիան սիմվոլիկ նշանակություն է ստանում, հնշում է որպես ներածական ակորդ նկարագրադրման մյուս թերթերի համար:

Գրիգոր Խանջյանը որոնում ու փնտրում է ԻՐ Կոմիտասին: Որոնում է Աևակի տողերում, որոնում է հայկական երգում, հայկական թանշխարհում, որոնում է Մարդ-Կոմիտասի ապրած կյանքի եւթյան մեջ:

Իսկ սի՞րուց, սի՞րու...

Իսկ սիրտը մարդու,

Սիրո հովերից այլևս արթում,  
Գարճան գնահ պես մերթ՝ վարար հորդում,  
Մերթ՝ անձրկի պես լալիս է, լալիս,

Ուզում է մեկին ասել.  
«Յանկալին»,  
Ուզում է մեկին խեղիքով ասել.  
«Իմ երա զ ու սե՞ր,  
Դու ե՞րբ ես գալու»...  
Գարում է, գարում:

Հոգեկան հուզումների, անծայր երիտասարդական սիրո, հողեղինի, մարդկայինի ու նույն այդ հողեղինից ու մարդկայինից ծայր առաջ հոգեստանց պատկերները՝ Խոսմարը, Շողերը, Սոնան, որոնց

Բոլոր գլուխը պսակած ծամով,  
Աշքերը նման սուրբ աստվածամոր

գայիս, շրջապատում են Կոմիտասին Գ. Խանջյանի «Երազ» թերթում, դասում եց հոգեմաշ ցնորդ: Նրանց սուրբ են, մաքուր են, կյանք են ու անհաս երազ: Ու հնըք՝ Կոմիտասը, լուսապայծառ ֆոնի վրա, նույնական ծաղին գամկած, զգացմունցներից խեղիպոլ, աշքեր փակ, զգացմունցներ խեղողոյ: Շուրջը գարուն է, շուրջպար, շուրջը ծաղկող ընտվյունն է՝ մեղմ, յովիչ: Ինքը՝ երիտասարդ, աքեղա, երազներից արրած, երազներին տարված, ամենից երես դարձրած ու ամենին կապված: Երիտասարդ, հայութիների կերպարները, թթենիների ու նորատունկ ծառերի ոդթմիկ հաջորդականությունը, մենքի նորագույնությունը, ընտվյան բանաստեղծական վերարտադրման կարողությունը այս թերթը մոտեցնում էն Եղիշե Թալևսույանի ստեղծագործական աշխարհին, հիշեցնելով Ծրա գեղանկարի թթենությունը, թափանցիկությունը ու քնարական հանգստությունը: Գ. Խանջյանի Ընդհանուրագործական մեջ բոլոր գծերը թափանցիկ երանգ են ստացել, որոնք նպաստում են բնաշխարհի ու աղջկեների մեղմ կերպավորմանը, ընդհանուր կոմպոզիցիայի մեջ նորանց հանգիստ ներգրավմանը:

Նույնանման տրամադրությամբ է տողորված նաև «Հարսանելիան երգ» թերթը: Նկարչի համար շատ ակելի հեշտ էր պատկերել տովորական հարսանելիան

տեսարան, որտեղ սակայն Կոմիտասի կերպարը կծովվեր ներգրավված մյուս կերպարներին: Գ. Խանջյանն ունի այլախի նախնական տարրերակ: Այսպիսի մեկնարանման ժամանակ, սակայն, խախտվում էր Ընդհանուրագործական կոմպոզիցիայի կառուցման հիմնական սկզբունքը, դեպքերին, գործողություններին մասնակից, բայց իր հոգեկան աշխարհով առանձնացած, ունկնդրող, ընկալող: Եվ այս նովս սկզբունքից ելնելով, «գոնվեց» «Հարսանելիան երգերի» վերջնական տարրերակը: Բազմաֆիգուր նկարում խրսխնաքի մասնակից գեղջուկների իրար հաջորդող դեմքերը ստեղծում են այն ատաղման, որի վրա առավել ցայտուն է դատում տեսարանի հոգերանական շեշտադրումը: Հմտու օգտագործված լուսատվերի մեջ ու սպիտակ հատվածների, նրանց կիսատուների լուծումները այս թերթի արտահայտչականությունը հասցնում են գեղանկարչական հնչեղության: Հատկապես ուշագրավ է կիսալուսում կանգնած, ներքին մի պայծառությամբ համակված Կոմիտասը, որի կերպարին արծագանքում է պարող հայունու նագելի ֆիգուրը՝ ամբողջովին կյանք ու զգացմունք, երգ ու ուրախություն դարձած:

Կոմիտաս ու երգը:  
Եվ որտեղ երգը՝ այնտեղ էր հիմա և Կոմիտասը:

Հեռանում էր նա խուցից ու վանքից,  
Գոյս էր այնտեղ, որ երգմ էր հնչում:  
Իսկ նա հնչում էր ամենու կո ու մի՛ շու  
Ամենու կո ու մի՛ շու  
Ուր հայն է շնչում:

Ու ստեղծվեց երգի նման բանաստեղծական «Լիրիկական երգեր» թերթը: Տարբերակները քաղաքան էին: Մի տարբերակում հայ գեղջուկներին օրորոցի մոտ էր երգում: Երգում էր հացատանը: Երգում էր լուսնակ գիշերին՝ օրվա աշխատանքից հանգիստ առնելիս: Եվ այդ ամենին, բոլոր դեպքերում, ունկըն-

դիր էր Կոմիտասը: Ունկնդիր էր իր հոգով, իր սըրտի ծայնով, իր ներքին եռթյամբ: Այսպիսին էին խանջյանական մատիտանկար տարբերակները: Հանգստություն, անշորր տրամադրություն կա վերջնական տարբերակում: Գյուղական տաճ հատվածը, խորոցը՝ փայտյա թախտը, խնոցին ու կուտանքը տանձնին «ճատկությունու են կազմում, իսկ պատշգամիք աստիճանների սյանը հենված հայութիների տարածների անպատճեն, բայց ընդգծված գեղանը-կարչական հստակությունը ինքնատիպ ազգային կոլորիտ, գյուղական հարազատ, ճշմարտացի մշագայր է ստեղծում: Որքան էլ դրանք հիշեցնում են Հ. Թումանյանի «Անուշ» համար կառարած խանջյանական նկարազարդումներից «Զանգովուրմը», Շուշան էլ հնցնատիպ են, եթերային ու... Շուշան հողեղեց: Թերթերն իրարից բաժանող սպիտակ եղորագծի այն կողմում Կոմիտասն է: Իր մտքերի, իր հույզերի, իր սրտի հետ զրուցող, սակայն աշխարհի հետ այնքան կապված մի կերպարի: Նկարիչը թույլ մոխրագույն պատի ֆոնի վրա Կոմիտասին պատկերում է սևազգեստ, որից կերպարը ստանում է վերություն, ինքնամիկով հոգեվիճակ:

Խանջյանը «տրամադրություն» զգացող, «տրամադրությունը» գեղարվեստական կերպարներով վերարտարող նկարիչ է, տրամադրություն, որը պարփակված է նկարազարդման ամեն մի հասկածուա: Այդ հատվածներն իրար լրացնելով գալիս ու դիտողին են հասցնում որց նկարազարդման ընդհանուր տրամադրությունը: Որքան էլ նկարչին հաջողվում է պատկերվածի բանաստեղծական եռթյան վերհանումը, սակայն նրա այլ կարողությունը յուրօրինակ արժեքավորում է ստանուա հատկապես դրամատիկական տեսարաններում: Այդպիսին է «Աշխատանքային երգեր» թերթը, որի մտահղացումը թելադրոված է բ. Ա. Ալակի պոեմի «Ուղանք բնաշխարհին» հատվածից:

Թերթի կոմպոզիցիայի կառուցման հստակությու-

նը, կերպարների դրամատիկ ինքնամփոփ հոգեվիճակները, նրանց սերտ կապը բնության հետ և, ամենակարևորը՝ աշխատավոր մարդու հոգի անսահման զգացողությունը՝ պոեմի նկարազարդումներից առանձնացնում են այս թերթը և դարձնում մինչհեղափոխական հայ գյուղին նվիրված գեղարվեստական առանձնին երկի: Թերթի կենորոնակամ կերպարներից է հայ գեղջկուհին, որը թվում է թե, մարմնապորում է աշխատավորի դառը կյանքի եռթյունը: Նկարիչը սակայն հեռու է ուղիղ մուվ իրեն հոգող հարցերը մենարաններւց: Նա հակված է դեպի հոգերանական սիմվոլները: Նույնություն կա այս գեղջկունու և և. Արովյանի «Վերց Հայաստան» վեպի նկարազարդումներում համեյապոլ տարեց կնոջ կերպարի միջև: Սրանց համար նախատիպ կարող էին ծառայել ուսակ, գեղարվեստական տիպականացման աստիճանի բարձրացված այնպիսի կերպարներ, ինչպիսից են Փափու մայրիկը, «Մթնշաղի» տարեց կանայք և այլն:

«Աշխատանքային երգերում» խիստ, մոնումենտալ բնության ֆոնի վրա դիմանկարչական կոնկրետությամբ լուծված հայ գեղջկունու կերպարին արձագանքում է թերթի մյուս մասում պատկերված Կոմիտասը՝ գորչ հոլակոտուների ֆոնի վրա, ուժեղ սևով լուծված, այնքան մոտ հողի մշակին ու այնքան ինքն իր հետ:

Կոմիտասն ու ժողովուրդը: Անի Խանջյանի նկարազարդումների մյուս ելակետը:

Եվ ինչ երկար դարերով  
Բո ժողովուրդն էր կիսել  
Նմուշ-Նուշ, հատ առ հատ,  
Դու լիաբուլ-լիաստա  
Շաղ տպեցիր աշխարհում:

Ու ստեղծվեց «Խմբավար» թերթը («Ղողանց հայության»), որն իր ընդհանրացման ուժով կարող է դիտվել որպես ոչ միայն Կոմիտասին նվիրված պատկեր: Այն ընդհանրապես ստեղծագործող

մարդում, եռպիյամբ իր ժողովոյի հետ ու նրա երաժշտության մեջ ապրող գործի կերպար է, որը դիմանկարչության հստակության հետ ունի նաև ներքին հոգական լարվածություն: Դրան նպաստող քաղաքիչները եց Կոմիտասի կերպարի ինքնամփոփությունը, ողջ թերթի գծանկարի ու ծևերի «քանդակային» ամրությունը, դրսե, որպես հակադրություն, ու ԸՆԿՈՒԹՅՈՒՆԻ կերպարները լուծված են թերթներում:

Այս նկարազարդումներում առկա է դրամատիկական մի տրամադրություն, որը նախապատրաստում է կենորոնական գործող անձի դրամատիկ վախճանը: Այդ դրամատիզմը առաջնաերթ Եշանակություն է ստանում հատկապես մի քանի թերթերում: Առաջններից մեջը «Կոռումկն» է:

Եւ, կոռումկ չկար Բնոյին քաղաքի երկնքում մթար,  
Որ վարագուրված հայոց աշխարհից գեյ խարիկ  
մը տար,

— Կոռ՞ մկ...

Ա՛խ, էլ հ' նչ կոռումկ, էլ հ' նչ սն կոռումկ,  
Սրտավեր պանդոյինս:

Բանաստեղծի այս տողերը Խանջյանի մոտ ստացել են ինքնատիկ փիփությական, գեղարվեստական լուծում: Նկարազարդման մի հատվածում հետի վեր ծգվող տերևաթափ չոր ծառեր են՝ բյուկինյան ամյության զգացումով պարորված, առանձին-առանձին, միայնակ, որոնք թերթի մյուս կողմի նույնատիկ ծառերի բների հետ ստեղծում են թերլինյան պայմանական մի ծառուղի, որով քայլում է Կոմիտասը: Քայլում է հետի դիտողը, քայլում է Կոմիտասը նաև համար մարդիկ, կյանքը, ողջ աշխարհը կորցրել են իրենց իմաստը, գեղեցկությունը, արժեքը:

արտադրում հայրենի բնաշխարհի առանձին հատկածները, շեշտում նրա ջերմ տրամադրությունը, մոնաւնսալությունը, վերությունը, ապա այստեղ փոխվում են նույնիսկ արտահայտչական միջոցները: Դրանց դառնում են ավելի սուր, զուսպ, շատ ավելի ընդհանրացված: Նկարիչը կարողանում է ընթեցողին տանել ուղիղ երկիր, օտար աշխարհ, որտեղ հոյոց ու ժողովրդից կտրված Կոմիտասի կերպարն էլ հնչում է որպես յևաթափ ու չորացած մի ծառ:

Նախորդ նկարազարդումներում աստիճանաբար զարգացող դրամատիզմը ծայրահետ լարվածության է հասնում «Եղեռն» թերթում: Նախնական մտահղացմամբ, Գ. Խանջյանի Եսրիգներում կային և աքսորականների խումբ, և շարդոված օրորոց, և հեռվուած շերտ կազմող հոյոց մի հատված: Որոնումների մեջ ամենը հրկվեց, հստակ կերպավորում ստացավ, ու ստեղծվեց դրամատիզմով լեցուն, էմոցիոնալ արտահայտչականությամբ օժոված երկմաս դրամատիկ մի կոմպոզիցիս:

Անապատ: Ամայի, անծայր տարածություն: Սպանված կանայք, տղամարդիկ, երեխաներ ու տուժիկներ: Գետին տարածված դիակներից մեկն այնքան հիշեցնում է «Աշխատանքի երգի» տարեց կնօքը: Եվ այդ սարսափի ֆոնի վրա Կոմիտասը՝ սևազգեստ, ոտարորիկ, դափի դիտողը եկող: Անապատի փոշին անհարա պազի շերտով ծածկում է դիակները, ծածանում է Կոմիտասի միջնէն գետին հասնող սեմբը: Բայց ու նա՝ ցնցված տեսածից ու ապրածից, քայլում է կոտրված ու հավետ իր անդրորը զգանոյի հոգով, քայլում է փոթորկից հրաշեմվ փրկված, ֆիզիկապես փրկված: Նրա համար մարդիկ, կյանքը, ողջ աշխարհը կորցրել են իրենց իմաստը, գեղեցկությունը, արժեքը:

Նկարիչը հոյու է մանրամանների պատկերումից: Նրան հուզում է հիմնականը՝ ողբերգականը, ժողովրդին ու Կոմիտասին հասած ողբերգականը, որի գեղարվեստական մարմնավորման համար նկարիչը

թերթի վերսի մասը հասու կտրում է, խորցու պատկերում սպիտակազգեստ կանանց դիակներ ու դրանց ֆոնի վրա՝ ուժեղ շարժման մեջ գտնվող Կոմիտասի կիսաթեք ֆիգուրը որը փոքր չափերում լուծված կոմպոզիցիայում բարձրանում է մոնումենտալուրյան աստիճանի: Իր արտահայտչականության ինքնատիպությամբ այս թերթը դիտվում է որպես առանձին ստեղծագործություն և շարունակում է հայ կերպարվեստում դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին հիմնավորված պատմական նկարչության սուրբնյանական ավանդները («Ուժնակոյն արված սրբություն», «Ձարոյից հնտո»):

Դ. Սևակի «Անընդի զանգակատուն» պոեմի նկարագրում ժամանակ նկարչի համար կարևոր էր գտնել հանգուցային կետեր, կենտրոնական արժեք ունեցող երևույթներ, որոնց նպատակավագ ու գաղափարավիր լինելով հանդերձ, լինելով հիմքի վրա խարսխված: Այդիմիտք են նկարագրուման բոլոր ուրեմները: Եվ նրանց հետ օրգանապես շաղկապվում է վերջինը՝ «Մթագնումը»:

Բայ տարի մեռած-ամթաղ,  
Ե՛կ մահացած, և ողջաման  
Մի սուրբ դիակ,  
Սուրբ ու միակ:

Ահա այսպես մենակ էլ պատկերված է կոմպոզիտորը «Մթագնում» թերթում, որտեղ կիսամուգ սենյակի հարթ պատերի, հատակին զցած սպիտակ թյուրի հատվածների միջոցով նկարիչը շեշտում է Կոմիտասի մենակությունը, նորա աշխարհից կտրված լինելը: Միակ կապը գետնին ընկած սրինգն է: Մոմի թուլ լուսով լուսավորված Կոմիտասի ծնկաշոք ֆիգուրը նախորդ դրամատիկական դեմքերի ողթերգական ավարտի մարմանացումն է: Կիսասոններով, հոգեքանական լարվածությամբ ստեղծված տեսարանը ցնցում է իր պարզ ու արտահայտիչ պատկերավորությամբ:

Նկարագարդման յուրաքանչյուր դրվագ ունի իր ենթատեքստը: Այդ է ակնարկում նկարիչը համարեղինակի՝ բանաստեղծի գործը զնահատելիս: «Անլույի զանգակատունը» կարծես դարձավ խորհրդանիշ այն բանի, որ զանգակների դողանցների մեջ աշխարհի բոլոր ծայրերում հայոց պետք է լիի մեծ բանաստեղծի ծայնը, որը գտնում է.

- Ողբա՛մ մեռելոց...
- Բեկանե՛մ շամթեր...
- Կոչե՛մ ապրոլոց:

Ինը թերթ, ինը երգ՝ Նվիրված Կոմիտասին: Կոմիտասն ու երգը, Կոմիտասն ու ժողովուրդը: Ահա խանջանական նկարագրումների՝ լիցումտիվը: Այդ միասնության գեղարվեստական մարմնավորման մեջ է նկարագրուումների ներգործման հիմնական ուժն ու արտահայտչականությունը: Այստեղից էլ նկարչի սերն ու նախասրբությունը դեպի ժողովուրդականը՝ անպարհիկ ներգրկումներով: Կենցաղային տեսարանները, ազգագրական զանազան իրերը, ճարտարապետական կորողների հատվածների ներգրավումը, հայրենի բնաշխարհի տեսարանները թերթում ու անկաշկան ներմուծվում են կենտրոնական թերթերի մեջ՝ իրենց լակոնիկ ու կերպարային կառուցվածքով շեշտելով նկարագարդման ազգային կոլյորիտը: Երթեմն, շաղկապելով դեպքերի զարգացման հիմնական գիծն, դրանք հանդես են գալիս որպես սկզբնազարդ կամ վերջնազարդ:

Ինչպես իր բոլոր նկարագրույթներում, նույնպես և այս դեպքում, Խանջանը գիրքը դիտում է որպես մի ամբողջություն՝ ցուցադրելով այս բնագավառում ծեղոք թրած իր բարձր կուսուկան: Հիմնական էջային նկարագրույթներին իրենց ոռով շաղկապելուն են ստացել շաղկիւ՝ ամբողջ սևով լուծված, աջում մի փոքր երիգով, որի վրա նկարիչը տեղավորում է «Եղեռն» թերթից վերցված Կոմիտասի ֆիգուրը, կազմը՝ գուագ և լակոնիկ: Տիտղոսաթերթի որդոնում՝

Ները ստեղծագործական պրատուլմների մի ամբողջ պրոցես են ներկայացնում: Կոմիտասը և աղքայութ գնացող աղջկները, սա է սկզբնական տարրերակների հիմնական թեման, որտեղ աղջկների գծային լուծված ֆիգուրները դիտվում են հարթ սև կամ սպիտակ ֆոների վրա: Եվ վերջին տարրերակը աշ անկումում եզների լուծն նստած շվի նվազող փոքրիկ գեղորկ տղան, իսկ վարած սև ռողի զանգվածի վրա՝ պոեմի վերնացիր:

«Անլուելի զանգակառուն» պոեմի յուրաքանչյուր գլխի համար ընտրված սկզբնազարդերն իրենց մեկնարանումերով դրվում են գայիս ընդունված սկզբնազարդերի օրինաչափությունից ու դիտվում են որպես առանձին գծանկարներ: Եվ վերջապես տառերի շարպածքը՝ վերնագիր, ենթավերնագիր, տերստի շարպածք, ամենն ունի իր հներատիկ առանձնահատկությունը, միաժամանակ դրանք իրար են շարկապատճեն միասնական ոճով, կատարողական արտահայտիչ հնարքներով: Այս ամենով գ. Խանջյանը կարողացավ շարունակել այն ավանդները, որոնք հայ գրի նկարագրության արվածուն հիմնավորել են Վարդգեն Սովորենյանը ու Հակոբ Կոջոյանը:

Դ. Սևակի «Անլուելի զանգակառուն» պոեմի նկարագրումները հախապատրաստված են այն համար աշխատանքով, որ գ. Խանջյանը կատարել է Հայուոր, տարիներին: Գրքի նկարագրությունում նա ծառում է պատմական երևությունների, պատմական դժուգերի ու գործույթույնների արդիական հընչեղության, խուափելով արտաքին, երեսն շատ շարժկան պատկերնան հնարքներից, համուն ներքին խորության, ծառում է ազգային ու համամարդկային գաղափարների միասնության: Խանջյանը կարողացավ մոտենալ իր հարցադրություններին, իսկ դա էլ նրա նկարագրադրություններին բերեց համաժողովրդական ճանաչում: 1969 թ. Պ. Սևակի «Անլուելի զանգակառուն» պոեմի համար արված գ. Խանջյանի նկարագրությունները արժանացան ՍՍՀՄ պե-

տական մրցանակի: Դա մրցանակ էր նաև հայ մշակույթին, նրա ժողովրդական ու արդիական եռթյանը:

Փ Փ Փ

Պատմության հոգերանական ոլորտներից Գրիգոր Խանջյանը եկավ դեպի հեղափոխական թշմատիկան, եկավ իր ժողովրդի պատմության միջոցով, հայ ձկնորսի հեղափոխական կերպարով, կերպար, որն անցել էր գաղտի ու կոտորածի բովով, ապրել իր ժողովով ողբեր ու:

Ամեն որ նետում էր ձկնորսն իր ոտկանը,  
Բայց չկար ուկե ձուկը բախտի:

Այս նկարագրադրությունների մասին իր ելույթներից մելում նկարիչը սաել է.

«Գրքի հետ շիվել լայնացրեց իմ ստեղծագործական մտահորիղունը, ստիպեց քրքրել անցյալի էջերը, փնտրել համոյիշ դժտաներ, կերպարներ, ազգագրական նյութեր: Նա ստիպեց նաև խորին աշխարհի մասին, ազգերի մասին, նրանց բախտի մասին: Սա էլ բերեց ինձ դեպի «Անլուելի զանգակատունը», ի ուցու դնելու աշխարհին մեր բախտը, այն կապեսով շատ ազգերի բախտի հետ: Դրա հնարավորությունները լայնացրեց Գևորգ Էմինի «Բալլար ձկնորսի մասին» երկը: Ն տարբերություն մյուս գրքերի, պայտեղ արդեն ցանկությունը կանգնած էր իրականություն դառնալու ճանապարհին: Անցյալի րուրու հասաները կարծեն վերջանում են Վաղիմիր Իշիշ Լենինի էմինյան խոսքերով.»

Բոլորի հետ դու էլ կոյանաս քո այգին,  
Քո Կապրին,

քո Վանն

ու Սևան:

Գևորգ Էմինի «Բալլար ձկնորսի մասին» փոքրածավալ երկը ճկավորման բազմազան հնարավորություններ էր տակիս նկարչին (1970): Ինչպես միշտ,

Գ. Խանջյանը ստեղծեց իր կերպարները, գործողությունների հմաստավորված զարգացման իր էջերը: Նա «Կտորտում է» տողերի շարվածքը և ստեղծուագրաֆիկական տեսարաններ, որոնք մարմնավորում են «Հեղափոխություն», «Ազգերի բարեկամություն» և «Էնադադություն» գաղափարները: Դրանք ստեղծվում են որպես կարևոր ֆոն, որպես գործողությունների շարք, որոնց ատաղձի վրա ծավալվում է հայ ձկնորսի բանտի պատմությունը: Կարևոր երևույթ էր Վ. Ի. Լենինի կերպարի մուտքը Գ. Խանջյանի ստեղծագրության մեջ: պարզ, մարդկային, նույնիսկ մի փոքր հայկական երանգ ունեցող դիմագծերով: Լենինի կերպարի այս նոր, բայց համոզիչ մեկնարանումը թելադրված էր Գ. Էմինի տողերով:

Ո՞մ բախտո չի խաչվել Լենինի մեծ բախտին,  
Որն աշխարհը հիմքից շենքի է...

Չե՞ր հիշում...

Հարցորեք սեփական ձեր բախտից,

Եվ ձեր բախտը կասի.

— Եղե՛ք է:

Ու ինչպես միշտ՝ ոչ միայն գրական երկի նկարադրություն: Նկարի թերթի կառուցման վարպետություն, գեղարվեստական արտախայտչականության հնարինի անսարման տարբերակների օգտագործուագրագրական միասնական նպատակասալցություն՝ խարսխված ժողովրդական մտածողության հիմքի վրա, արտախայտչական հնարինի վարպետ օգտագործուագրական միասնական նպատակասալցություն:

Գրիգոր Խանջյանի ստեղծագրության առանձնահատկություններից է ազգային կերպարների, ազգագրական նյութերի հանդեպ ունեցած հետաքրքրությունը: Ավելին: Խանջյանը գրական երկի ընտրությունը հիմնականում կատարում է այն տեսանկյունից թելադրված:

Ստեղծագրական անսպառ հնարավորություն տվեց Օրան Եակ Գ. Էմինի «Սասունցիների պարը» գործորիկ երկը (1974):

Սասունցիների պարը մեկնակետ էր, շարժիչ ուժ, որպեսզի նկարիչը կարողանար թեմատիկ պատկերներ ստեղծել հայրենի երկի, հոդի, երկիրը ու հողը պաշտպանող, պայքարում կոփված, իրենց նոր հողն ու ջուրը գտած մարդկանց կյանքի մասին:

Գ. Էմինի գորապ ու բովանդակալից տողերը Խանջյանի մոտ դառնուած են առանձին, ինքնուրույն պատկերներ այլպիս ու՝ պաշտակ Սասունի, խեղված ու սպանված հայրենասեր սասունցիների մասին: Սա պատմություն է, դարձ պատմություն: Այս թերթերը լուծված են սև և դեմա-շագանակագույն երանգների տարրերակներուա, որտեղ լուսավոր հատվածները հմտորեն գուգորդվուած են կրակների տաք կարմիրներին: Այստեղ նույնական կարևոր կերպարներից է գեղօկուրի տարեց կինը, որը և կրուա է հետքերի թերթական իմաստոց:

Սեցյալի դրամատիկական պատկերները հակառակված են Աշճակամ հիմնավորված սասունցիների նոր կենցաղի տեսարաններին: Եվ, բնականարար, կենտրոնական թերթերը նվիրված են սասունցիների հաշանավոր պարին, որն անտարեր չի թողնուած դիտողին իր ոիթմուն, իր ազգային հնեմատիկ կոլորիտով, իր հզոր ու վեր բնույթով:

Գևորգ Էմինը գրում է:

Պարե՛ց Սասունն ու ողջ աշխարհը հիացավ,  
Պարե՛ց Սասունն ու ողջ աշխարհը հասկացավ,

Որ պար չէ սա, այլ մի երկրի

Բազ պատմություն,

Ուր պարտություն անգամ

Ունի հպարտություն,

Եվ չի հաղոր ոչինչ այն հին ժողովորդին,

Որ այս շանրու ու այս կամքը կ

Պարե՛ց գիտի:

Եվ իրոց: Կամքով լի, առնական կերպարներ են պատկերված գրի կենտրոնական թերթուա, որտեղ սպիտակ հարթության վրա երաժշտների գրաֆիկական խիստ ընդգծված ուրվագծերն են կամ հնչեն

կարմիրի վրա՝ պարուների ոլթմիկ շարքը: Թերթերի կոմպոզիցիաների գումային կառուցվածքում նշանակալից տեղ են գրավում տարագուները՝ սահմա թերթերն ու ազատ սպիտակ վերնաշապիկները ու վարտիքներ, մորթե շագանակագույն կարճ բաճկուներ և, ամենակարևորը՝ հնչեղ կարմիրով ստացված գլխի փաթթողներն ու գոտիները: Ընդհարապես, գորի ամրող ծավագործած մեջ կարևոր սպիտակ ու կարմիր գույներն են, նրանց համադրությունները, նրանց երանցներն ու անցումները: Դրանց հարաբերությունների վրա են կառուցված նաև ստափեր շապիկը, տիտղոսաթերթն ու էջանոց նկարները, նույնակ տեքստի շարվածքը, որի համար ընտրված է ընտիր բոլորագիրը (գրիչ՝ Խ. Սուրբայան): Կարմիր ու սպիտակի հնչեղությաց առավել շեշտմանն օգնության է գալիս սկզ՝ որպես գիծ, որպես ծև ստեղծող գումային կարեւոր գործոն: Թերթի գումային հնչեղությանը, նրանց տոնական պայծառ տրամադրությանը նպաստում են ազգագործական իրերի կոլորիտային ներմուծածները. Խեցեց աղաման, գրտնակ, գայթանախչիկ, փայտն ու պղնձեց զանազան ծևի իրեր, սիմիներ, որոնք ստեղծում են այն կարևոր միջավայրը, որն անդրածեց է նկարագրադրությունների գեղարվեստական կերպարի ամրոցականացմանը:

«Աստունցիների պարի» ծևավորումն օժտված է այս մոտածված ու կուտակուցվածքով, որը բնորոշ է Գ. Խանջյանի գրաֆիկական արվեստին ընդհանրապես: Սուպեր շապիկի, էջային նկարների, տեքստի ու առանձին նկարչական հատվածների այնպիսի միասնականություն, որտեղ նկարչը ներմուծած իրական ու երևակայական հանդես են գալիս միաձուլվ, թելարված են, գրական տեքստից և իրենց են՝ Խանջյանին:

Գ. Խանջյանի ստեղծագործության մեջ հայկական, ազգային ծովովում, միահյուսվում է տարրեր ազգերի հեղափոխական գաղափարներին, այդ գաղափարներն ընկալելով որպես հայկականի արտա-

հայտություն: Դրա լավագույն վկայություններից է «Հայաստան» խորագիրը կրող, երեք թերթի բաղկացած նկարաշարը (1971):

Երեք դրվագ հայ ժողովորի պատմությունից, Երա կյանքի վերջին տասնամյակների պատմությունից: «1915 թիվ», «1920 թիվ», «1970 թիվ»: Այս երեք թերթերն իրար են կապված ժողովորի ճակատագրի ընթացքով, սակայն տարրեր են և ըստ էլույան, և ըստ տրամադրության: Այստեղ կարևոր է Եցել Գ. Խանջյանի արվեստը բնորոշող մի շատ կարևոր առանձնահատկություն: Պատկերված կերպարների ծեղքերի խաղը, նրանց ները, նրանց ակտիվ ու արտահայտիչ մասնակցությունը գեղանկարչական կամ գրաֆիկական աշխատանքների հմատավորման մեջ:

Զեղքեր... Աշխատող, կառուցող, ստեղծագործող, որբացող, աղերսող, հովանավորող, սիրող ծեղքեր՝ Խանջյանի բոլոր ստեղծագործություններում: Այդ նույն ծեղքերն են, որ «Հայաստան» գրաֆիկական եռանկարում և նարձել են զաղափարական արտահայտչականության հիմնական կրողները: «1915 թիվ» թերթում հայ կնոջ վեր պարզած ծեղքերը քաջ հայտնի են նկարչի մյուս ստեղծագործություններից (հատկապես Խ. Արույսանի «Վերը Հայաստան» վեպի նկարագրադրություններից): «1920 թիվ» աշխատանքում զինվորի հովանավորող, ուժեղ ծեղքերն են, որոնք իշել են հայ մանուկի ուսին և «1970 թիվում» մայրական գթությամբ գրկել են բարուրի մեջ նեղող մանկան: Ուշագրավ է, որ գրաֆիկական այս թերթերն արված են, լինովորագրության տեխնիկայով: Գ. Խանջյանն առաջին անգամ էր անդրահատում հաստոցային գրաֆիկայի այս տեսակին, որը հնարավորություն է տալիս մեծ հարթությունների համադրության, գիծ խստության, նրա հաստու ընդգծվածության: Զեղքերի արտահայտչականության, նրանց ակտիվության, նրանց «փոխեցելու» վրա են կառուցված Ս. Շուլիտովի «Մարդու

ճակատագիրը» պատմվածքի Ըկարազարդումները:

Շանոթ լինելով համառուս կինոնկարին, Ըկարիչներ Օ. Վերիշևու և Կուկրինիկսիների արտահայտիչ Ըկարազարդումներին, անկասկած, բավականին ծանր խնդիր էր հաջոց առնում լուծելու երիտասարդ հայ Ըկարիչը (1965), ընդունելով Ծեպիցի տոնավաճառի 800-ամյակին նվիրված սովորական գրքի ու նրա մեավորման ցուցաբանդեսին մասնակցելու հրավեր-պատվերը:

Կ Նկարազարդելով Մ. Շոլյսովի «Մարդու ճակատագիրը» պատմվածքը, Գ. Խաճջանին հետաքրքրում էր ուս մարդու, սովորական մարդու՝ աշխատող, սիրող, համար կամքի տեր, անենու, հասարակու պարզ Սոկոլովի կերպարը: Այդ կերպարի առանձնահատկությունները բացահայտելու համար Ըկարիչն ընտրում է հոգեբանական չորս դրվագ միայն: Ըստ Ըկարչի մտարդացման, այս չորս դրվագները Սոկոլովի դժվար ճակատագիր ամենածայրանեղ արտահայտություններն են և հնարավորություն են տալիս բացահայտելու նրա վերաբերմունքը ինչպես դեպի իր ճակատագիրը, նույնպես և դեպի շրջապատող իրավանությունը:

Նկարազարդումների մեջ թերթը Ըկարիչը նվիրեց Սոկոլովի մինչպատերազման խայադ օրերին: Դա կարող էր ունենալ և սյուժետային պատմողական լուծում, որը Ըկարչին կինոացելք գեղարվեստական ընդհանրացումներից: Էսքիզների առաջն տարրերական մենու սենյակի մեջտեղում դրված սեղանի շուրջը նուած է երիտասարդ Սոկոլովը իր կողոք հետ դեմ-դիմաց, միրաֆորով հայացքով նրան նայելիս: Նուածա տարրերակներում հերոսները մոտենում են դիտողին, գալիս են արաջն պլան: Մեկ այլ թերթում կանգնում են իրար դիմաց երիտասարդ բանվորն ու փորերիկ գլխաշորով, մանկական արտահայտությամբ առջիկը: Սակայն Ըկարիչը ծգուստ է գտնել կոմպոզիցիայի այնպիսի մի որպէս, այնպիսի մի հատված, որը բանադի կրառնա հերոսի

կերպարի բացահայտման համար Ըկարազարդման բոլոր թերթերում, նրանց տալով էմոցիոնալ և տեսանելի զգացողության միասնականություն: Եվ նա գտավ այդ բանային: Սոկոլովի ձեռքերը: Վերջին տարրերակում, որը կոչվում է «Ծրինկա», ծնկներից պատկերված հերոսների ֆիգուրները ստացան վերջնական կերպարային լուծում: Թերթի մակերեսի վրա Սոկոլովի դեմքը չի երևաւ: Իշխողն Իրինայի կերպարը է՝ բարակ վերնազգեստի տակից երևացող հրագեղ մարդունաձևերով, ուժու լուսավորությունից թափանցիկ, եթերային դարձած, երջանկությամից պայծառացած դեմքը: Եվ հոլանի վզի վրա՝ ամուսնու խոչշոր ձեռքը. կոշտացած, ամուր և սիրող: Խաճջանը զգաց շոլյուսվան ոռմանտիկայի եռվայրը և տվեց այդ ոռմանտիկայի իր մենաբանումը:

Նոյն այլ, ձեռքերը հաջորդ թերթում («Չեմ հասցնի տղաներին այս ոտակիքը») գրկում են ֆաշիստական ճամբարում ստացած սև հացի կտորը, գրկում են չոր, ջղուտ մատներով, մեծ կրցու: Չեռքեր, որոնք, թվում է թե, իրենց մեջ կենտրոնացնում են կյանքից կառչած սոված մարդու ուժը: Սոկոլովի դեմքը չի երևում: Կարևոր այլ, ձեռքերն են, ուս մարդու ձեռքերը, որոնք, բոլոր տեսակի տանջանքներին դիմարձած, գրկել են կյանքի մի փոքրիկ հոկուս՝ հացը տառնու են կյանքեր փոկելու: Ընթերցողին միանգամից դեպքերին հայողականից դարձնելու սկզբունքը են կառուցված այս թերթերի նախական հինգ տարրերակները, երբեմն գերմանացիներով շրջապատված, երբեմն՝ փշալարերի ֆոնի վրա հերոսական քայլով առաջ գալիս... Սակայն Ըկարչի համար կարևոր Սոկոլովի ձեռքերն են ու նրա գրկած հացի կտորը, որոնք և շեշտված են ու վերջին տարրերակում առաջն պլան մոված: Ուսական հացի մի կտորը Սոկոլովին է վերաբարձրել ապրելու ցանկությունը, նրա ճամբարային գոյությանը նոր իմաստափուրում տալով: Սոկոլովի ողջ կեցվածքը զգացվում է վնասանություն՝ ապրել ինչ գնով է ուզում:

լինի, ապրել ու հայցել: Կերպարի դրամատիզմի վերհանման օգնում են նաև հստակ, համարյա քանդակային ուժի հասցած ծավալները և գծի արտահայտիչ օգտագործումը: Գծանկարի վարպետ Գ. Խանջյանի համար սրանց են ամենակարևորը:

Պատմվածքում կարևոր հանգուցային տեսարան է Սովորովի որք տղա Վանյայի համեմատած: Գրաֆիկական թերթում հերոսի կերպարը և զանգվածով ուրվագծված է բեռնատար մեքենայի լուսամուտից երևացող ոռաական բնանկարի ֆոնի վրա, գլուխ բարձր բռնած: Նրա գրկում երշանիկ պահ է ապրում հաճուքից աշերը փակած բախտակից երեխան: Նոյն ձեռքերը, սոկուլյան ձեռքերը գուրգուրանքով, առնականորեն իշել են կիսամերկ, ողջ էտքյամբ երջանկություն արտահայտող տղայի մեջքից:

Ծայրահետ լակոնիզմի, արտահայտչականության, որոնումների տեսակետից բավականին հետաքրքիր է վերջին՝ չորրորդ թերթը:

Անծայրածիր դաշտի ֆոնի վրա քայլում են նրանք՝ մեծ և փոքր մարդոց, քայլում են ինքնամփոփ, լորաքանչյուղն իր մոտերի մեջ խորասուզված, քայլում են իրենց նոր կյանքի ոսին գտած: Կենորոնում ուժեղ հատվածներով տեղավորված են նրանց դեմքերը՝ դիմանկարչական հատակությամբ արված, լուրջ, ինքնամփոփ: Քայլում են նրանք իրարձեռք բռնած: Թերթի կենտրոնում են նաև նրանց ձեռքերը: Մեկը՝ մեծ, կամքով լի, հոկոս ներշնչող, վճռական, իսկ մյուսը՝ փոքր, մանկական վատահությամբ լի: Տարբերակներից մերում տղան նայում է դիտողին, որից կանգ է առնում նկարազարդման ներքին մղումը, շարժումը: Մյուսում Սովորով ծնկներից է պատկերված, որից տղայի ողջ փիգուրը գալիս է առաջին ալան, և կորչում է նկարի կառուցման միասնականությունը: Երբեմն ամրող թերթի տարածությունը գրավում են քայլող Սովորովի ուրերը, իսկ տղայի կերպարը խեղճանում է, կտրվում

է նրա կապը Սովորովի կերպարից: Ավարտված թերթի կարևոր առանձնահատկությունը նրանց տրամարանական հիմքն է, հղված, պարզեցված, սակայն որոշակի հավասարակշուության մեջ դրված: Զեթի պարզեցված, հստակ լեզուն խարսխված է զուապ, փափուկ գծանկարի վրա, որի թավաշյան պյաստիկականությանն ու նրբագեղությանն օգնուած ածուկով արված թրոտուն առանձին հատվածները: \*

Գրիգոր Խանջյանն իր այս գործերով գալիս է հաստատելու սովորական կերպարվեստի կարևոր առանձնահատկություններից մեկը՝ նրա քաղաքացիական էությունը: Դա շատ ավելի հիմնավորված և տրամարանական հենցով հանդես է եկել նրա ճանապարհորդական նկարաշարերում:

«60 օր Ալբանիայում»— այսպես է կոչվում Գ. Խանջյանի առաջին արտասահմանայն նկարաշարը (1958), որն ընդգրկում է ավելի քան 60 ավայրության գեղանկարչական և գրաֆիկական աշխատանք: Այստեղ պատկերված են արանացիների սովորությունը, տեսարաններ նրանց կենցաղից, վերարտադրված է նրանց ջերմ, մի փոքր լայաստանի լայնափոփոխ նման բնաշխարհի կոլորիտը, պատկերված են մարդիկ: Այստեղ հին ու նոր Ալբանիան է՝ իր ընորոշ առանձնահատկություններով: Նկարաշարում նշանակային են «Անակոտ», «Կեսօր», «Շուկա», «Ապաստմ», «Բանվոր Քրիստո Կանելի դիմանկարը» և այլ գործեր, որոնցում նկարիչը հատուկ ուշադրություն է նկիրում ազգային ինքնատիպ կոլորիտին: Նրա բոլոր արտահայտություններում: Նա վարպետությամբ է օֆուագործում ջրաներկի նուրբ անցումները, պատաժել թավաշյությունը ու թարմ հրճներությունը, լուղաներկի բազմագույն լուծումները, իսկ գրաֆիկական խիստ գիծը Գ. Խանջյանի գեղարվեստական բարձր ճաշակի արտահայտություն է: Անշուշտ, այս աշխատանքներում զգայի դեր է խաղում երևույթների ազգագրական կողմի շեշտադրու-

մը, որը, սակայն, Խաճջանի մոտ, հնչպես միշտ, հնքանապատճեն չէ: Ճաշակով ընտրված ազգագրական դետալները՝ տարազ, կենցաղային իրեր և այլն, օրգանապես կապվում են Էտյուտի կամ ավարտված ստեղծագործության հիմնական մուադացմանը: Գ. Խաճջանի մոտ ազգային արտարայտվում է կենցաղի, ստվորույթների, մարդկանց փոխարարելությունների վերհանման միջոցով, որի արդյունքն է դառնում ազգային ոգու, երևույթի ազգային կողմի շեշտադրություն: Այս մեծնարաանուանով են արքած նրա այսական գործերը:

Բոլորովին այլ տիպի ստեղծագործություններ բերեց Գ. Խաճջանը Ֆրանսիայից (1960): Դրանք այլ են ոչ միայն իրենց մոտիվներով, երկրի բնույթում, Փարիզի փոլոցները, եվրոպական մեծ քաղաքի մարդիկ: Ամենն այլ է իր ոճով, տեսածի էմոցիոնալ ընկալման բնույթով: Եթե ալբանական նկարաշրջում Գ. Խաճջանն ինչ-որ մի տեղ կաշվանդված է երևույթների փաստական կողմի վերարտադրյան շրջանակներում, ապա երկու տարի անց ստեղծված փարիզյան նկարաշրջում կարևոր գեղանկարչական երակետն է:

Միա Սենայի ափը, որը կարծեն մոխրագույն է դարձել աշնանային անձրևուտ քամուց: Միատարբ մոխրագույնի մեջ ընդգծվում են տերևաթափ հինավորդ շագանակնեները («Սենայի ափին»), առաջ փարիզյան փոլոցը գիշերով՝ բազմագույն ցուցափեղերով, մի պահ կան առած կիսամերկ կանանցով, որոնց ֆոն են դարձել մոտերի մեջ թառմած քայլող առջկա ուրվագծի համար («Երեխոյան»), առաջ բուկինիստների թաղամասը՝ ցուցադրված գծանկարների, գրավուրների ու գրեթի կողերին վաճառողների կոացած ֆիգուրները, որոնց վրայով թեթև սահման է Սենայի եկող զովը («Բուկինիստներ»): Այս նկարաշրջի լախագույն գործերից մենք ստացել ենքպարհոնիստների ցուցահանդեսում» խորացիրը: Իր տիպաժներով, կոլորիտի բնույթով, ձե-

վերի թեթևությամբ ու սահումությամբ, գումային հոտակությամբ այն հիշեցնում է Ռենուարի կոտակները: Գույնը, որն այս նկարում ստացել է հագեցվածություն և թրթացող անհանգստություն, նպաստում է կերպարների ինքնամկոփ հոգեբանական արտահայտչականությանը:

Բոլորովին այլ ինքնասիպաւություն ունի նկարների հուական շարքը (1962, 1965—1966):

